

Հայրապետական Ենորհաց արժանացած
կուսակրթներ.

Յորին Սրբութիւնն ի նկատի առնելով
Սեանայ վանքի վանահայր Բարեշնորհ Տ.
Սարգիս վարդապետ Փիլոյեանցի անձնուէր
և զնահաաւելի աշխատութիւնը յօգուտ վան-
քի և միաբանից, բարեհաճեց շնորհել նորան
վարդապետական ակնանկու ա լանջախաչ, կոն-
դակ թ. 164:

Յոր նախիջեանի փոխանորդական պաշ-
տօնի մէջ հաստատուեցաւ և սե կերպասեայ
Ծաղկեայ փիլոն կրելու կոնդակ ստացաւ Վեհ.
Հայրապետից Բարեշն. Տ. Մուշէ վարդապետ:
թ. 284.

Թէլէթի վանահայր Բարեշնորհ Դիոնէ-
սիոս վարդապետ Համալեանց, իւր ցոյց տուած
հաւատարիմ ծառայութեանց համար ար-
դեանց բազմացնելու վերաբերութեամբ, և վա-
նուց վերանորոգութեան, ինչպէս և մինչև
Ալէքսանդրապօլ իրրև Սանահինի միաբան
Յորին Ս. Օծութեան ուղեկից լինելուն հա-
մար, ստացաւ կոնդակ սե Ծաղկեայ կերպա-
սեայ փիլոն կրելու թ. 385:

Աղէքսանդրապօլ եղած Ժամանակ վեհա-
փառ Հայրապետը միաբերան մեծ զոփեսա լսելով
Խճկօնից (Բէշքիլիսէ) վանքի վանահայր Բարեշ.
Թարութիւն վարդապետի և միաբան Տ. Թա-
կոր վարդապետի քրտնաջան աշխատութեանց,
ինչպէս և ուխտաւորաց ցոյց տուած ամեն
ղիւրութեանց, քաղաքաւարի և սիրալիր ըն-
դունելութեանց համար՝ բարեհաճեց նոյնպէս
երկուքին ևս շնորհել վարդապետական լան-
ջախաչ, առանձին կոնդակներով. թ. 414
և 415:

Պարզեաւորեալ քահանաներ՝ ըստ միջնորդու-
թեան թեմակալ առաջնորդաց:

Աւագ Բահանայութեան պատուին ար-
ժանացան Տփլիսի Կոնսիստորիայի զանձապահ
Տ. Համադասպ Տ. Եովհաննիսեան և նոյն
Կոնսիստորիայի անդամ Տ. Արսէն Բաղրա-
տունի քահանաները. կոնդակ. թ. 362, 363:

Կամիլաւեայ կրելու իրաւունք շնորհուեց
Տփլիս քաղաքի Զաքարիա քահանայ Զար-
դեղեանին, Սարգիս ա. քահանայ Ողիդեան-

ցին, Գարրիէլ քահանայ Տ. Գարրիէլեանցին
և Դրիգոր քահանայ Շիրմազանեանցին. թ.
կոնդակաց 364, 365, 366, 367:

Քահանայական լանջախաչ կրելու իրա-
ւունք շնորհուեցաւ Տփլիս քաղաքի և նոյն
թեմի հետեւեալ քահանաներին. 1 Եովսէփ
քհ. Արուսեանցին, 2 Մկրտիչ քհ. Գիւլում
եանցին, 3 Գարեգին քհ. Առաքելեանցին,
4 Թադէոս քհ. Երուանդեանին, 5 Կարապետ
քհ. Ալանեանցին, 6 Ղազարոս քհ. Պահլա-
ւունուն, 7 Թադէոս քհ. Աստուրեանին,
8 Գէորգ քհ. Մեհրաբեանցին, 9 Մարտի-
րոս քհ. Ամիրդանեանցին, 10 Աշոտ քհ. Տ.
Խարայեանցին, 11 Սահակ քհ. Խաչա-
կեանցին, 12 Եովհաննէս քհ. Դէմուրեանցին,
13 Արիստակէս քհ. Արովեանցին, 14 Թա-
կոր քհ. Գարրիէլեանցին, 15 Զրիստափօր
քհ. Եղիկեանցին, թ. կոնդակաց. 368, 369,
370, 371, 372, 373, 374, 375, 376, 377,
378, 379, 380, 381, 382:

Վերոյիշեալ քսան և մէկ քահանաները
պարզեաւորուեցան թեմակալ առաջնորդ Դիւր.
Տ. Գէորգ Արքեպիսկոպոս Սուրենեանցի միջ-
նորդութեամբ:

Երեւանի վիճակում:

Աւագ քահանայութեան պատու շնոր-
հուեցաւ Ալէքսանդրապօլ քաղաքի զործա-
կալ Տ. Աղէքսանդր քհ. Ամատունուն. թ.
կոնդակի 416:

Քահանայական լանջախաչ կրելու իրա-
ւունք շնորհուեցաւ Ալէքսանդրապօլու վի-
ճակի Օրթաքիլիսէի զործակալ Արսէն քա-
հանային թ. կոնդակի 417:

Սոքա երկօքեան պարզեաւորուեցան ըստ
միջնորդութեամբ զեր. փոխ. թեմակալին Ն-
րեանայ Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի:


Վեհ. Հայրապետի օրհնութեան և զօրոճա-
կութեան արժանացողներ:

Օրհնութեան և զօրհնակութեան կոն-
դակ շնորհուեցաւ Նուխում վերաբնակւող
պ. Եովհաննէս և Արրաշամ Բունթաթեանց
եղբայրներին, մի խաչվար վարեւահող նուխ-

յարերեւուն համար յօգուտս Եղիշէ Առաքելոյ վանքի Դիս աւանի թ. 305:

Օրհնութեան Կոնդակ շնորհուեցաւ Նիկողայոս Բ. Երկայնարազուէ Արղութեանցին Սանահնի վանուց վերանորոգութեան համար, որ նորանախնեաց յատուէ սրբավայրն է և դամբարանը. թ. 306:

Օրհնութեան և զօհունակութեան կոնդակ շնորհուեցաւ Տփլիսաբնակ պ. Կարապետ Յարութիւնեան Եազոմեանցին, նորա աշխատանաց փոխարէն, որ սովորեցրեց երկու գողթական հայ աշակերաների իւր արհեստը. թ. 307:



ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱԺԻՆ

ՏԷՐ ԻՄ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ԻՄ

Յովն. Ի 24:

Թ

ՈՎՐԱՍ առաքեալը չէր կամենում Փրկչի յարութեանը հաւատալ, մինչեւ Նորա ձեռքերի վերայ բեռաների նըշանը չտեսներ և Նորա խոցուած կողը չշօշափէր: այստեղից սովորութիւն է մնացել կասկածողներին և թերահաւաններին «Թովմաս» անուանել, և մենք երբ թեթեամբաբար՝ չենք կարող հաւատալ, ասում ենք, կարծում ենք թէ առաքեալի օրինակին ենք հետեւում՝ մոռանալով, որ նոյն այդ Թովմաս առաքեալի կուրծքից դուրս թաւա առաջին անգամ ամենազօրեղ հաւատոյ բացականութիւնը՝ «Տէր իմ և Աստուած իմ»։—Մեր դարը երկրայութեան և հետախուզութեան դար է, գիտութեան մէջ դրախտն ուղղութիւնն է իշխում և առհասարակ մարդիկ ձգտում են ամէն ինչ փորձելով ապացուցանել՝ տեսնել ու շօշափել, որ ապա իբրեւ իրողութիւն ընդունեն: Թէպէտ հաւատոյ առաքան չափի ու ձեւի տակ չի մտնում, բայց Թովմաս

առաքեալի օրինակը ցոյց է տալիս, որ նորա նման կշռադատող մարդիկ ևս հաւատոյ ճանապարհի վերայ ելնել կարող են ի վերջոյ, ուստի և նա թող ուղեցոյց լինի ներկայ սերունդին այդ ճանապարհը դանդաղ:

Հաւատալ նոյն չափով զիւրին չէ այս և այն մարդու համար. կան թեթեամբա մարդիկ, որոնք ամէն լսածի հաւատում են, և այդ հաւատը ոչինչ փոփոխութիւն յառաջ չի բերում նոցա հոգու և սրտի մէջ. այդպիսիների նկատմամբ Յովհաննէս աւետարանիչն ասում է՝ «Ինքն Յիսուս ո՛չ հաւատար զանձն նոցա... զի ինքն իսկ զիտէր զինչ կրէր ի մարդն»։ Կան նաեւ միամիտ մարդիկ, որոնց մանկական հոգու ինչպէս մի պայծառ հայելու մէջ՝ ճշմարիտ հաւատը շող է տալիս իսկոյն և ճառագայթներ արձակում, լուսաւորում ամբողջ տունը. այդպիսիների հաւատը Բրիստոս շատ բարձր էր գնահատում և իւր հետեւողներից պահանջում էր աղանու միամտութիւն ունենալ կամ մանկան հոգի, որպէս զի ճշմարտութեան լոյսը առանց արգելքի նոցա սրտերը թափանցէ: Սակայն մի երրորդ կարգի մարդիկ ևս կան, որոնց համար հաւատալ նոյն է թէ ամբողջ ներքին աշխարհը տակն ու վրայ անել, մինչև այժմ՝ ունեցած բոլոր համոզմունքները, զգացումներն ու իղձերը զօհ բերել Աստուծոյ սեղանի վերայ և բոլորովին նոր կեանք սկսել. իսկ այդ զօհաբերութիւնը հեշտութեամբ առանց երկարատեւ ու յամառ ներքին կռուի չի լինում, և ով այդ կռուի միջից յաղթող է ելնում՝ նա այլևս ո՛չ միայն սոսկ հաւատացող է, այլ հաւատոյ հերոս, ինչպիսին էր օրինակ Պօղոս առաքեալը, ինչպիսին անշուշտ էր նաեւ Թովմաս:

Եթէ սա անհրաժեշտ էր համարում Տիրոջ վիրաւոր ձեռներն ու կողը շօշափել, որպէս զի Նորա յարութեանը հաւատալ կարողանայ՝ իւր զօրաւոր պատճառն ունէր այդ պէտք է մէկ մտածել՝ ինչ ասել է պարզ աչքով տեսնել ճանաչա՞ղ մարդուն խաչի վերայ դա՞մնւած, հոգին աւանդելիս՝ տեսնել և խորտակուած սրտով տուն վերադառնալ, ամէն տկնկալութիւն, ամէն յոյս Խորայէլի Ժողովրդի և սեփական անձի փրկութեան